Հավելված
Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի մարտի 31-ի թիվ 434-Ա հրամանի

ԿԱՐԳ

Գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվող վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի համաֆինանսավորման/համապարտության գործընթացի համար նախատեսված հավաստագրման

1. Սույն կարգով կանոնակարգվում է գյուղատնտեսական կոոպերատիվներին (այսուհետ՝ Կոոպերատիվ) տրամադրվող վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի համաֆինանսավորման/համապարտության գործընթացին մասնակցելու համար նախապայման հանդիսացող հավաստագրի (այսուհետ՝ Հավաստագիր) տրամադրման գործընթացը:
2. Հավաստագիրը տրամադրվում է Կոոպերատիվի նախագահին՝ այդ նպատակով կազմակերպվող դասընթացին մասնակցության արդյունքում:
3. Դասընթացներին մասնակցելու համար Կոոպերատիվի նախագահը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) է ներկայացնում դիմում (էլեկտրոնային եղանակով):
4. Դասընթացը կազմակերպվում է ոչ ուշ, քան դրան մասնակցության դիմումի ներկայացման օրվանից 30 օրվա ընթացքում: Դրա մեկնարկի ամսաթվի վերաբերյալ Կոոպերատիվի նախագահը ծանուցվում է ոչ ուշ, քան դասընթացի մեկնարկից 5 օր առաջ:
5. Հավաստագրման նպատակով կազմակերպվող դասընթացի առավելագույն տևողությունը 5 աշխատանքային օր է:
6. Հավաստագիր ստանում են դասընթացի ծրագրին համապատասխան կազմված քննության արդյունքում բավարար գնահատված մասնակցիները:
7. Հավաստագրման դասընթացի ծրագիրը մշակում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (այսուհետ՝ Համալսարան)՝ Նախարարության հետ համատեղ:

8. Դասընթացին մասնակցության վճարը կատարում է Նախարարությունը: Վճարի չափը որոշվում է Նախարարության և Համալսարանի միջև կնքվող պայմանագրով:
9. Հավաստագիրը տրվում է 24 ամիս ժամկետով: